ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 01 2023թ.
№ ԿԶԱՄ/2-122

«Արմտեքստիլ» ՍՊԸ-ի (00498117)
տնօրեն Ա. Գրիգորյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արցախ թաղ. 56
հեռ. 010 444-334

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի միջև 03.11.2021թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-22-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և այդ պայմանագրին կից 24.02.2022թ. կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն 2022թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 340000 մ² կտոր, սակայն «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում մատակարարել է 313718,05 մ² ապրանք, որը չի ընդունվել՝ տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 27-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 313718,05 մ² ապրանքի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14369071 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 4728000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ, որոնք համապատասխանաբար կազմում են 94 560 000 ՀՀ դրամ և 139 055 526 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ